Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 29.

2. Արձանագրությունը գրվում է ձեռքով կամ պատրաստվում տեխնիկական միջոցների օգնությամբ: Դատավարական գործողություններ իրականացնելիս կարող են կատարվել սղագրում, լուսանկարահանում, կինոնկարահանում, ձայնագրում և տեսագրում: *«Սույն օրենսգրքի 212-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում տեսաձայնագրություն կատարելը պարտադիր է»:*

Հոդված 212.

3. Մեղադրյալը հարցաքննվում է նախաքննության կատարման վայրում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր գտնվելու վայրում: *«Մեղադրյալի հարցաքննությունը տեսաձայնագրվում է»:*